

Հոռոմոց տիրապետութեան եւ ազդեցութեան, եւ թէ ժամանակին հայ վարդապետք ստիպուեր են ներել, որպէս զի ազուհացից միւս օրերն հաւատարմութեամբ պահէին, եւ Յոյներէն ալ զատուէին (Խսր. քառ.): Այս տեղեկութիւնս՝ որ պատմական հիմ չունի, նկատելով լուծման բարձր հնութիւնը մեր մէջ, նիւթապէս առաւ ու կրկնեց Շնորհալին եւս՝ առ Ալեքս թղթին մէջ (Ընդհ. 63): Յանուն Օձնեցւոյն կեղծ գրութիւնը «Սակա ժողովոց՝» երկու օրերուն փափկացումը սոյն հայրապետիս կը վերագրէ, իբրեւ թէ «զանհաւան ազգս մեր» ասով բաժնեկու համար քաղկեդոնականներէ (աստ, 248-9): Փափկացման նպատակին կողմանէ համաձայն Խոսրովկայ հետ, եւ հեղինակի մասին անմիաբան, անհիմն է այս վկայութիւնս ալ, զոր կը ժխտէ նոյն ինքն Օձնեցին, ըսելով՝ որ պահոց մեր թեթեւացումն ինք չէ հնարեր, այլ գտեր է «յաւանդութեան եկեղեցւոյ», ինչպէս տեսանք: — Կեղծ Օձնեցին թոյլ կու տայ ճաշակել ձու, ձուկ, ձէթ, թան, իւղ, պանիր ու զինի, եւ զասոնք խտրողները կը նզովէ (Թղթ. 231): Մեր հոս առաջին անգամ կը տեսնենք լուծման ուտեստից ուղղակի յիշատակութիւնը, թէեւ անուղղակի կերպով